

Հրատարակի ամսոյն Տին 22ին
Ստորագրութեան տեղն է
Խրդար աղաւթի խան Թին Տ :

Տարեկան գին կանխիկ դրշ 100
Դուրսերէն բաժանորդ եղողնե-
րը փոստայե ծախքը կը վճարեն :

ՈՒՍՈՒՄՆ ԶՆԳԵՏԱՍԱՆՈՐԵԱՅ

ՇՈՒՆԻՍ, Տ

Ս. ՏԱՐԻ 1864

ԹԻՐ 49

ՀԻՆՏՔԵԱՐ ԻՍԿԷԼԻՍԻ

ԿԱՍ

ՍԱՏԻՍ 24

Եւրոպոյ է ըսել թէ աս վերնագրով Մայիս
28 ին կիրակի օրուան հանդէսը կիմանանք : Սեր
դիտաւորութիւնը հոս հանդէսին պատմութիւնն
ընել չէ, այլ քանի որ հանդէսը փոքր 'ի շատե-
ազգային հանդէսի մը կերպարանք առաւ . քանի
մը դիտողութիւններ ընել կ'ուզենք մինակ ցուցը-
նելու համար թէ անանկ հանդէս մը ինչ դի-
տում կամ նպատակ ունենալու է : Մեր սովո-
րութիւնը չէ որ բան մը չարիէն կամ ընդունա-
կութիւնէն աւելի բարձրացնենք . բայց չենք ու-
զեր այնպէս ալ երեւնալ որպէս թէ դէպքերուն
ունեցած քիչ կամ շատ արժէքը խոստովանիլ
չենք ուզել : Եթէ չենք սխալիլ հանդէսին նը-
պատակը՝ Սահմանադրութեան հրապարակական վա-
ւերութիւն մը տալու մտքով անոր տարեդարձի
տոն մը սահմանել է . չենք կարծեր թէ հանդէսին
դարաւորը յղացողներուն միտքն ալ ասկէ աւելի
բան մը կը դիտէր : Սեր ազգային վարչութեան
ժամանակին յարմար եւ յառաջադիմութեան նը-
պատակող կերպ մը տրուելով, ոչ կառավարու-
թեան յառաջադիմ ընթացքին, ոչ ալ ազգին
անխելական եւ բարոյական կարգաւորութեանը հակա-
ռակ քայլ մ'առնուած եղաւ : Կա մանաւանդ մեր
Օգոստափառ Տիրոջ Սուլթանին վերջին բարե-
րար դիտաւորութիւնները մեզի եւ ամեն հասարա-
կութեան ներքին բարեկարգութեան նոր ծախա-
ներ բանալու արտօնութիւն տուած են : Եւ պատ-
ճառաւ ոչ Սահմանադրութեան եւ ոչ անոր հա-
մար եղած որ եւ իցէ բանի մէջ, քանի որ հա-
մետութեան սահմանէն դուրս չելլուիլ, ազգային
կամ քաղաքական անպատեհութիւն մը կը տես-

նենք : Բայց հոս դիտելու կարեւոր կէտ մը կայ :
Եզդին մէջ Սահմանադրութեան քիչ շատ ընդգի-
մութիւն ունեցող եւ անոր համար ալ ազատական
սկզբունքներու եւ ազգային յառաջացման ծուռ աչ-
քով նայող կարգ մը մարդիկ ենթադրելով կամ
մանաւանդ ստեղծելով Սահմանադրութիւնն ու ա-
նոր համար եղած ամեն բան անոնց դէմ մէյմէկ
յանդիմանութեան պէս երեւցնելը մեզ Սահմա-
նադրութեան օգտակարութիւնէն կը զրկէ : Եթեկա
Սահմանադրութիւնը սիրողներուն զիջուլութեան
համար միայն կ'ըսենք . ոչ թէ ըսել կ'ուզենք թէ
վերջիշեալ հանդէսն անանկ հոգւոյ մը արդիւնք
էր : Սահմանադրութեան կամ աւելի համեատ բա-
ռերով ըսենք՝ նոր ազգային կանոնադրութեան
սկզբունքին քիչ շատ հակառակ գտնուողներ՝ ըլ-
լալէն բնաւ չհետեւիր թէ անոնք ազգային յառա-
ջացման թշնամի են : Եթէ Սահմանադրութիւնը
սիրողներն անիրաւութիւն ըրած կ'ըլլան, թէ որ
կարգ մը մարդիկ իբր յաղթուած կողմակցութիւն
մը ձեւացնելով Սահմանադրութիւնը վրէժխնդ-
րութեան գործիք ընեն, նոյնչափ եւ աւելի անի-
րաւութիւն մ'ըրած կ'ըլլան անոնք որ Սահմանադ-
րութեան եւ անոր համար եղած ամեն բանի մէջ
յաղթուած կողմակցութեան դէմ վրէժխնդիր ոգի
տեսնել կը կարծեն : Մենք կը հաւատանք թէ
ազգին մէջ հակառակ խորհողներ կան, եւ ըլլալն
անօգուտ չէ . բայց չենք հաւատար եւ պատճառ
չունինք հաւատալու թէ անոնք ազգային յառա-
ջացման թշնամիներ են : Սահմանադրութիւնը մե-
զի սիրելի է ոչ անոր համար մինակ որ անիկա ա-
զատական սկզբանց վրայ հիմնուած է, այլ եւ մա-
նաւանդ անոր համար որ անոր մէջ ազգային յա-
ռաջացման զօրաւոր գրգիռ մը կը տեսնենք . քան-
զի համոզուած ենք որ հասարակաց ոգին շարժ-
ման մէջ դնող անկէ աւելի զօրաւոր սկիզբ մը գէթ
առ այժմ չկայ : Լին եւ մանաւանդ նոր պատ-

մութիւնը վիպ է թէ Սահմանադրական սկզբունքը մտած տեղեր հասարակութիւնները նոր ոգի ու նոր կենդանութիւն առած են : Եթէ Հինքեար Խսկէ-
լէսի հանդէսին բուն եւ օրինաւոր նպատակն ազ-
գային յառաջացման նպատակաւ կանոնադրութիւն
մը աօնախմբել է, անով ուրիշ բան հասկըցը-
նել կամ հասկընալը հանդէսին նպատակէն դուրս
է, եւ անոր բարոյական նշանակութիւնը կը փոխէ :

Հիմա ուրիշ դիտողութեան մը դասը : Ոմանք
կը կարծեն թէ Մայիս 28 ին հանդէսին այլեւայլ
մեկնութիւններ կրնան տրուիլ . բայց հասուն ու
քաղաքագէտ միտքերու համար անոր նշանակու-
թիւնը մէկ է : Հարեւանցի խորհելով մարդիկ սո-
վորաբար շատ դէպքերու մէջ քաղաքական նպա-
տակ տեսնել կը կարծեն : Հետեւեալ տեսութիւնը
Հինքեար Խսկէլէսի դէպքին վրայէն այնպիսի
կասկածանաց ամպերը կը փարատէ : (Սմանեան)
կառավարութիւնն իր ընդարձակ պետութիւնը կազ-
մող ցեղերուն սահմաններ որոշած է, անոնց մէջ
յառաջ երթալ անոնց ոչ միայն արտօնութիւնն ,
այլ եւ պարտաւորութիւնն է : Կառավարութիւնը
երկրին յառաջագիմութիւնը կ'ուզէ : Կառավարու-
թեան թշնամիներն անգամ խոստովանելու են թէ
(Սմանեան) կառավարութիւնը Եւրոպիոյ առջեւ
իր քաղաքականութեանն ու վարչութեանը մէջ
մեծամեծ բարեկարգութիւններ ըրաւ եւ կ'ընէ :
Բայց երկրին անտեսական յառաջագիմութեան մեծ
ու գործնական մասը Պետութեան այլեւայլ ցե-
ղերուն առանձին ջանքերէն կախում ունի : Իւրա-
քանչիւր ցեղ իր սահմանին մէջ յառաջ երթալու,
ուստի եւ իրեն ինկած երկրին անտեսական յառա-
ջացմանը համար իրեն ինկածն ընելու համար,
հարկ է որ միութեան, հասարակաց հոգւոյ եւ
լուսաւորութեան նպատակով վիճակ մ'ունենայ :
Աւրիշ առթի մէջ ըսած ենք, եւ դարձեալ կ'ը-
սենք . Հայերը ճանչցած են թէ երկրին անտե-
սական յառաջացմանը մէջ գործող մաս մըն են .
եւ երկրին մէջ իրենց աս վիճակին համեմատ դիրք
մ'ունենալ այնչափ աւելի անոնց իրաւունքն է,
որչափ անոնց ու երկրին շահը նոյնը կը պահանջէ :
Տաճկաստանի այլեւայլ ցեղերուն ցեղային ու կրօ-
նական նախապաշարունակներն արդի լուսաւորութեան
առջեւ երկրին յառաջացմանն ու բարոյական մի-
ութեանը համար փնտսակար ճանչցուած են . բայց
երբոր հաւասարութեան ու եղբայրութեան ոգւով
երկրին յառաջացումն իր հասարակաց գործ նը-
կատելով իւրաքանչիւր ցեղ իր ամբողջութիւնը կը
զօրացընէ, գէթ ըստ մեզ երկրին քաղաքակա-
նութեանը ոչ գէժ, այլ ի նպատակ գործած կ'ը-
լայ : Օսմանեան պետութիւնը կազմող այլեւայլ
ցեղերուն շահը պետութեան ընդհանուր շահին հետ

այնպէս նոյն է, որ ցեղի մը իրաւանց ու պարտա-
ւորութեան ճամբով յառաջ երթալէն անհնարին
է որ պետութիւնը չշահի : Եւ դիտողութիւնները
բաւական են ամեն արդար խորհող միտք համա-
ղելու թէ Հայոց մէջ եղած շարժումները՝ ժամա-
նակին, իրենց ու երկրին կարօտութեանը ճանա-
չումէն յառաջ եկած են : Պարտաւորութեանց կա-
տարումէն աւելի բան մը չկրնար պահանջուիլ ա-
նոնցմէ՝ որոնք իրաւունք մը կը ճանչնան ու անի-
կա վայելել կ'ուզեն : Վասնի որ աս տեսութիւն-
ներն իրական բաներ են, ուրիշ որ եւ իցէ
մեկնութիւն կամ կասկած երազէ մը աւելի ար-
ժէք չունի :

ԳԱՍՏՐԱՐԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Տէ- Թէ- / 12

Ըսինք թէ սերնդեան ճամբով յառաջ եկած ժա-
ռանգականութեան վարդապետութեանը դէմ ա-
ռարկութիւն մը կրնայ ըլլալ . Իւ սա է թէ մեծա-
մեծ քանքարներու տէր մարդիկ շատ անգամ ան-
հանձար զաւկներ կ'ունենան, և բազմաթիւ գեր-
զաստաններու մէջ իրարմէ շատ տարբեր ընդունա-
կութեան տէր անձինք կը գտնուին :

Եւ դիտողութիւնը միայն սա կը ցուցունէ թէ
տղաք տարբեր տարբեր տրամադրութեամբ կը ծը-
նանին . բայց սերնդեան օրէնքներուն ազդեցու-
թեանը դէմ բան մը չապացուցաներ : Ընտանիք-
ներու մէջ անհասանելի վրայ տեսնուած բնական
ու բարոյական տարբերութիւններէն չհետեւի որ
ծնողաց ազէկ կամ գէշ յատկութիւնները ժառան-
գութեամբ անոնց սերունդին չանցնիր : Արբոր ա-
նասուններն անխտիր այսինքն առանց ընտրութեան
և խառնիխուռն զուգաւորութիւն, անոնց սերունդները
կամ ձագերը տարբեր տարբեր կ'ըլլան . բայց եր-
բոր զուգաւորութեամբ անհասանելի ցեղին մարքու-
թեանը և ուրիշ հարկաւոր պայմաններու միադրո-
ւի, ծնած ձագերուն բնութիւնն ուրոյն կամ օրիշ
հանգամանք մը կը ստանայ : Մարդոց համար ալ
նոյն բան է . քանի որ ծնողները խառն են, անոնց զա-
ւակը հարկաւ յետին ծայր տարբեր պիտի ըլլայ :
Բայց թող անգամ մը որոշ տրամադրութեան տէր
անձինք հետ դճտե սերունդ յառաջ բերեն, ցե-
ղերը կը սկսին որոշուիլ : Մանաւանդ ընդհանրապէս
մօր մը ունենալու պայմանը պէտք եղածէն շատ
նուազ կարեւոր համարուած է : Սակայն դիտողու-
թիւն եղած է որ ուստերք (մանչ զուկրներ) հասա-
րակօրէն իրենց մօրը յատկութիւնները կ'ունենան,
իսկ դստերք (աղջիկ տղաք) իրենց հօրը, և մեծա-
մեծ քանքարներու տէր մարդիկ ընդհանրապէս մը-

տացիք մայրերէ ծնած են : Բայց երբոր նշանաւոր մարդիկ ստորին ընդունակութեանց տէր անձանց հետ կ'ամուսնանան, ան ամուսնութեան սերունդին յատկութիւնները հարկաւ անստոյգ ըլլալու կը սկսին : Կ'երեւի թէ Բարբաղիք էգին մեծ կարեւորութիւնը ճանչցած են . անոր համար մատակ ձի օտարներու չեն ծախեր . և իրենց ձիերուն ազնուութիւնը մատակներուն ցրէին կ'առնեն :

Որդեծնութեան հասակն ալ անտարբեր կարծեալու չէ : Բնասնոց ամէն տիոյ (հասակի) մէջ սերունդ յառաջ բերել կամ զուգաւորուիլ թոյլ տրուած չէ . անոնք ոչ կարի մատաղ, ոչ ալ կարի ծեր, այլ առջգ տարիքի մէջ զուգաւորութեան կը բերուին : Տաղանդի և գիտութեան տէր մարդիկ շատ անգամ կ'ամուսնանան՝ երբոր մարմինը, մանաւանդ զային դրութիւնը երկարատեւ ուսմամբ և տկարացուց : Կատաճանքերով սպառուած եւ հիւժած է : Բնոյն դուն ուրեք 'ի ծնէ հարուստ են . ուստի և խիստ անսոր է որ անոնց վիճակն՝ անոնց մեծագոյն ազդուութեան ատենն ամուսնանալ ներէ : Բայց և այնպէս իրենց ազագայ սերունդին օգտին համար՝ իրենց սովորաբար բրածէն աւելի բան կ'ընէին, եթէ ժառանգական իջման օրէնքներուն համադրած ըլլային . և աղէկ գիտնային թէ միտքը մարմնոյ գործարանաւորութենէն կամ կաղմակերպութենէն կախում ունի : Կարեն նորածն կամ տիրող եղանակներէ ու սովորութիւններէ աւելի՝ ան օրէնքներուն վրայ արժէք դնելու յօժարիլը խելացութիւն է :

Հնոցաց տարիքը՝ թէ անոնց առողջութեանն ու թէ զաւելներուն կազմութեանը նախամար ուշադրութեան արժանի է : Իրենց մատաղ ատենէն պատու բերելու սկսող ծառեր տկար կ'ըլլան . և իրենց տեսակը տխուր հասակի մէջ յառաջ բերող անասուններ՝ ընդհանրապէս առուգութեան չեն հասնիր : Հատ կանայք որ իրենց տակաւին յոյժ մանկամարդ եղած տաներ կ'ամուսնանան, և շատ դաւ կըներ կը բերեն, հիւժած ու մաշած կազմութեան մը տարածում զոհ կ'ըլլան : Դարձեալ մատաղ տունկերու պտուղն ալ անկատար կ'ըլլայ : Մատաղ թռչնոց ձուն խիստ փոքր է . մատաղ չորքոտանեաց ձագերն ալ տկար ու զածած են, նոյնպէս ծեր կամ հինաւորաց կենդանիներու սերունդը տկար կ'ըլլայ : Բս պատճառաւ գեղացիներ կամ անասնաւոր մարդիկ ասանկ ապստամբ ծնունդները տեսակ յառաջ բերելու համար չեն պահեր : Ըրէից օրէնսդիրն անասնոց առաջնեկները պահել ու գործածելն անոնց կարգիլէ : Բ. Օր. Ժ. 19. Երբոր ծնողաց երկուքն ալ խիստ կանուխ ամուսնանալով շատ զաւելներ կ'ունենան, հասարակօրէն տղոց երիցագոյնները՝ ծնողաց առուգութեան ժա-

մանակը ծնածներէն նուազ քանքար կամ մտաւոր կարողութիւն կ'ունենան :

Ելլասերութեան (սեռական) օրէնքներն ալ ժառանգական իջման օրէնքներուն կը վերաբերին : և ուրոյն մտադրութեան արժանի են : Բս օրէնքներն ալ բոլոր բնութեան մէջ ընդհանուր են : Միւսին գեանի վրայ մշակուած տունկեր կ'այլասերին : Հորենք՝ գարւոյ, վոյ, փաթածէզի և ուրիշ արմատաց հետ փոխն 'ի փոխը ցանուելու է : Ուր որ եղևինը չաճիր, փոխանակ կաղնի դնելու է : Ելլասերալ տնկոց սերմը՝ ցանի համար գործածուելու չէ, ապա թէ ոչ տուած բոյսը կը փճանայ . և պատուաստողներ հիւանդ կազմութիւն ունեցող ծառէ մը ուրիշ ծառի վրայ ած չեն պատուաստու : Բս կերպով կը բացատրուի թէ ինչու համար արտաքին պարագաները նպաստաւոր չեղող այլապէս ամբողջ գաւառներու մէջ միւսին տեսակ պտղոյ ծառեր բնաջինջ կ'ըլլան : Դառին հիւանդ յատկութիւնը յաջորդաբար կը սերի, մինչև որ արտաքին շարունակ վնասակար ազդեցութենէն ծառը կը չորնայ : Եւ ծառ մը ուրիշ ծառէ մը, կամ միւսին ծառի մը մասերն ուրիշներէն աւելի շուտ կը կորսուին կամ աւելի երկար կը դիմանան ան ճիւղերուն ազդեցութեանը համեմատ՝ որոնց վրայ պատուաստուած են : Սոյն այլասերութեան օրէնքն անասնոց մէջ ալ կը տիրէ : Ելլ և այլ պարագաներ անոնց կազմութիւնը կը տկարացնեն . և այլասերութեան առջին առնելու այլապէս պայմաններուն մէջ հարկաւոր պայման մ'ալ խառնը, այսինքն զոյգերը կամ ըծակցները փոխել ու արիւնը նորոգելն է :

Մարդուն այ աստիճան կամ ապստամբ ըլլալը յայտնի կը տեսնուի ան ընտանիքներու մէջ որոնք իրենց մէջ միմեկին խնամութիւն կ'ընեն : Եւ որ կամ մարդաբար ու եղբար կամ քրոջ աղջկունք, նոյնպէս եղբայրակներ ու քոյրակներ (հոգեւ, հոգեւ) որոնք քանի մը ծնունդ աս սխալմունքը կը գործեն՝ զաւակ չեն ունենար, կամ ունեցած զաւակին հասարակօրէն տկար են : Որչափ ամուսնութիւնը մատաւոր ազգականաց մէջ ըլլայ, այլասերութիւնը կամ սերունդին զարգացում չգտնելն այնչափ արագ կ'ըլլայ, և բնաւ ընկերութեան վիճակ մը չ'իյայ որ կարող ըլլայ աս օրէնքէն բացառութիւն ընել : Եւստիներէն մէկուն վրայ երեւցած մարմնաւոր կամ մտաւոր տկարութիւն մը ասանկ ամուսնութեանց մէջ շուտով զաւակը կը զգածէ . այսինքն անոր շուտով կը յարի : Բս տեսակ ամուսնութիւններ, մանաւանդ Եւրոպայ, աշուտապետական գաղափարով պաշարուած հարուստ կամ բարձր աստիճանի ընտանիքներու մէջ յաճախ կը պատահին . և որովհետեւ ասանկ ընտանիքներու ապրելու եղանակը մարմնոյ առուգութեան կամ ուժեղ և հուժ-

կաւ ըլլալու նպատակաւոր չէ, անոր համար զարմանալու բան չէ որ մերձաւորաց ամուսնութեանը վերը յիշուած փնտախար հետեանքը, ուստի և անոնց ձգտարութեանն ապացոյցները սովորաբար և յայտնի կերպով ասանկ ընտանիքներու մէջ կը տեսնուին: Եւ աս բանը մարդկութեան բարեկամները բնութեան օրինաց զեղծմանը դէմ եղած հատուցումներուն վրայ զարմանալու կը հրաւիրէ:

Արեան մեծ աղղկեցութեանը մէկ ապացոյցն ալ սա է որ սովորաբար 'ի ծնէ եղած յատկութիւնները, զորօրինակ հաշմութիւն կամ խեղութիւն մը քան թէ արհեստով կամ արտաքին պատճառներէ յառաջ եկած որպիսութիւններն են որ սերնդեամբ զաւկընեցու կ'անցնին: Օրինակի համար 'ի ծնէ համը ծնողք շատ անգամ համը զաւկընէր կ'ունենան. ուր թլիքատութիւնը շրէից ու Մահմետականաց մէջ տակաւին աւելորդ եղած չէ: Աւելի հաւանական է որ առանց թլիք ծնած մարդ մը իրեն նման ձեռնատա տղաք ունենայ, քան թէ վերաբուծին դանակովը բաղուկը կարուած մէկը:

Դ Պ Ր Ո Յ

ԿԱՄ

ՆԱԽՆԱԿԱՆ ԴԱՍՏԻՍԵՐԿԱՌԻԹԻՆ

4. Կենցաղագիտութիւն: Կենցաղագիտութիւն ըսելով կ'իմանանք ան բաներուն գիտութիւնը, որոնք մարդս ընկերութեան մէջ «կենդան» ու զարգացի կ'ընեն: Մարդս ընկերութեան մէջ «կենդան» ընող բանն է: Այնքան անհրաժեշտ է: Թեպէտ շատ մարդ սիրուն եւ հեշտ կերպով կենցաղավարելու բնական ձիրք ունի, բայց ընդհանրապէս սիրուն եւ հեշտ, ընտիր եւ զուարթ կենսակցութեան հիմը քաջամուտ միտքն է. աւանկ միտք մը որ կոկուած (փոխ) ընկերութեան սովորութիւններուն ու եղանակներուն մէջ ալ ազնի հրահանգուած ըլլայ: Այնի կենցաղավարութեան արհեստն ըստ մասին ընտիր ընկերութեանց մէջ յաճախելով. ըստ մասին փորձառու վարպետի մը հրահանգութենէն, եւ դարձեալ ըստ մասին կենցաղավարելու բնական ձիրքը կ'ընելով եւ ուրիշներու վրայ դիտողութիւն ընելով կը սորվուի:

Մարդս ընկերութեան մէջ «կենդան» ընողն արտաքին ձեռք կամ հագուստի վայելչութիւնն է, որն որ ժամանակին ճաշակին յարմար պարզ բայց մաքուր եւ ընտիր ըլլալու է: Կենցաղագիտութեան աս մասը այն է կարելի ձեւել, ասընագործութիւն իւր սալօքն, ինչպէս նաեւ ընտանեկան անտեսու-

թիւնը որ տնարարութեան ու տանտիրնութեան մասերը կը պարունակէ, 'ի մասնաւորի կանանց սեռին յատուկ արհեստն է. ուստի եւ աղղկանց դաստիարակութեան արտաքին բայց երեւելի մասն է:

Մարդս ընկերութեան մէջ «կենդան» ընողը զեղարուեստից ընտանեկան մասն է, այսինքն՝ երաժշտութիւն ու նկար: Երաժշտութեան մասին՝ ձայնաւոր (փոխ) երաժշտութիւնն առաջին կարեւոր բանն է, եւ ընդհանուր մշակուելու արժանի: Պորժիւտը երաժշտութեան կամ նըռազածութեան չենք կարծել թէ նոյնչափ կարեւորութիւն կայ: Բամբուան (փոխ) համար խնդիր է թէ արդեօք ամէն մանչ եւ մանաւանդ աղղիկ աղայ աս նուագարանին համար այնչափ ճաշակով ու տաղանդով կը ծնանի որ երեք կամ չորս տարուան երիր մասն անոր վարժութեանը համար վասնուի: Փորձով տեսնուած է որ աս նուագարանը սորվողներուն կէսին ժամանակը, ըստակն ու աշխատութիւնն ընդունայն կ'ըլլան: Բայց կրնայ մէկն ըսել թէ հապա ինչ նուագարան ընտրենք: Այն նուագարան մը սորվեցնել հարկաւոր է, բամբուր յատուկ տաղանդներու ու ետքի պահելով, ձայնաւոր երաժշտութեան հետ ընկերացնելու համար՝ լոկ կ'իմարը բաւական է. եւ բամբուր զարնել սորվելուն գլխաւոր նպատակն ալ ձայնաւոր երաժշտութեան ընկերակցութիւնն է: Գարձեալ տաւիղը (հարթ) բամբուր շատ աւելի քաղցրաձայն ու դեղնեղուն է: Սա կէտը դիտողութեան արժանի է որ գործիւտը երաժշտութիւնը կամ նուագաչարութիւնը ձայնաւոր երաժշտութեան ծառայելու համար է, այնպէս որ աս տեսութեամբ ձայնաւոր երաժշտութիւնն երաժշտութեան տոջին ու կարեւոր մասն է. ուր աւտոր հակառակն ընդհանրապէս ձայնաւոր երաժշտութիւնը թողուած ու գործիւտը նպատակ գըրուած է:

Երաժշտութիւն սորվողներուն կէսն իր աշխատութիւնը շատ աւելի վարձատրուած պիտի տեսնէր, եւ շատ աւելի գոհ եղած պիտի ըլլար, եթէ զձագրութեան արհեստը սորվէր, որ զուարճալի ըլլալէն զատ օգտակար եւս է: Գձագրութեան մէջ առաջին է դժանկարը՝ որուն մէջ ճարտարապետութեան սկզբունքները կը պարունակուին երկրորդ՝ դաշտանկարը որուն մէջ կ'իմացուի ընդօրինակութիւնը երրորդ՝ մարդու գէմք նկարելը, որ խիստ հրապուրիչ եւ զբօսալի է մանաւանդ անոր համար որ վարժ ձեռք մը կրնայ աս արհեստով կենդանի ընկերութեան մէջն ալ եւալ կտորնել ու բուրդաւորել: Երրորդ տեսանկարը (դէպէն դէպէն) որ առանձինն զինուորական ճարտարապետութեան արհեստն է:

Սկզբնական կենցաղադրությունը դաստիարակությունների ընթացքին մեջ, հասարակ կենաց վաշխությունների նախընտրված, կրթությունների գործնական ու ծաղկաւէտ մասն է :

5. Եւրոպական ուսման մեջ կրթությունը կարեւոր ուսմանց սկզբունքներն օրինակի համար բնապատմություն, բնախօսություն, քաղաքագիտություն, քաղաքական տնտեսություն, պատմություն, աշխարհագրություն

ու փիլիսոփայությունների սկզբունքները . այս վերջինին մեջ տրամաբանություն ու փիլիսոփայություն պատմությունը կարեւորագոյն եւ օգտակար կարծուած է :

Միջին նախնական դաստիարակությունների ամբողջ դրությունն է, որուն վրայ առանց այլ եւս երկայն խօսելու, հոս տախտակով մը ներկայացնենք ետքը, ուսուցանելու կերպին անցնինք :

ԳԱՆԱԿՈՐՈՒԹՅՈՒՆ	ՆԻԻԹՔ	ՄՏՔԻՆ ԶՈՐԹՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	ՓԻԼՍՈՓԱԿԱՆ ԶԱՂԾՈՒՆԵՐ
	Չափաբերություն	Ըմբռնում , Դիտակցություն . Իմաստասիրություն .	Ապացուցական Տրամաբանություն .
	Տարբերություն	Դիտողություն . Փորձ , Դատողություն .	Փորձական տրամաբանություն
Բնական (ֆիզիկական) դիտություններ .	Բնական փիլիսոփայություն	Խորհրդածություն . Պատճառություն . Յիշողություն .	Տարբերություն պատճառի եւ արդեանց .
	Մեքենական փիլիսոփայություն .	Սկզբնական մեքենայում Կարողությունների իրացում Չօրությունների վերլուծություն	Տարբերություն զօրություն եւ շարժման :
	Աստղագիտություն .	Դիտողություն Հանրապետություն Դրությունացում :	Պատճառներու հանրացություն .
	Բառագիտություն .	Ըմբռնում . Յիշողություն .	Մտադիր կարողությունների կըրթություն :
	Քերականություն .	Վերլուծություն . Բաղադրություն .	Կարգի սկզբունք :
Ուսումնական լեզուներ .	Շարադրություն	Խորհուրդ . Կատակցություն . Ճաշակ . Դատողություն .	Սկզբունք մտադրությունների եւ զանազանությունների :
	Ընթերցում .	Խորհուրդ . Խորհրդածություն . Քննադատություն .	Սկզբունք հետաքրքրությունների . Գաղափար մտայն :
Կենցաղագիտություն	Ազնիւ կենցաղավարություն արհեստ . Կանանց տնական արհեստ .	Ընկերական զգացմունք . Ընտանեկան գաղափարք .	Ընկերություն .
	Գեղարվեստք . Երաժշտություն . Գծագրություն .	Գեղեցկին ճաշակ . Ներգաշխակությունների գաղափար Չափակցությունների գաղափար .	Գեղեցկություն .
	Բնապատմություն . Բնախօսություն .	Բնությունների գաղափար ,	Բնություն .
Իտալիական ուսմանը :	Քաղաքագիտություն . Քաղաքական տնտեսություն . Պատմություն , եւ այլն .	Քաղաքական Ընկերություն գաղափար :	Կառավարություն .
	Փիլիսոփայություն . Տրամաբանություն .	Մտքին գաղափարները :	Միտք

Մեր մինչև հիմա ներկայացուցած դաստիարակութեան նիւթերուն մէջ առաջարկուածները նոր բաներ չեն. մինակ ազատ ժողովուրդի մը դաստիարակութեանը հարկաւոր եղած բաներուն գըլխաւոր գաղափարներն երեւան հանել ջանացինք: Հիմնական գաղափարներն ասոնք են:

1. Ազատ ժողովուրդ մը ազատ միտք ունենալու է:

2. Ազատ միտքը պարտի լուսաւորեալ ըլլալ. տգիտութիւնը գերի կ'ընէ:

3. Միտքը լուսաւորելու համար անհկա իմացական ու մտաւոր կերպով զօրացընել ու զարգացընել պէտք է:

4. Միտքը զօրացընելու համար առաջին հարկաւոր բանը խորհելն է:

5. Իրերուն վրայ ուղիղ խորհելու համար մտքին բոլոր կարողութիւնները դուրս բերել ու զօրացընել հարկաւոր է:

6. Ինչոր կարողութիւնները հետզհետէ դուրս բերելու համար, պէտք է որ դաստիարակութիւնը հրահանգէ ու վարժէ միտքը բնութեան օրէնքներուն (գիտութեան) մէջ, բացատրութեան (լեզուի եւ դրագիտութեան) մէջ, ընկերական բնութեան օրէնքներուն (կենցաղագիտութեան, քաղաքագիտութեան, տնտեսութեան) մէջ, եւ իմացական բնութեան օրէնքներուն (փիլիսոփայութեան) մէջ:

Իսկ դաստիարակութեան նախնին կոչուած տախտակին բովանդակած վերջնական գաղափարը՝ ցուցընել է թէ դաստիարակութեան մեծ նպատակը զորին զօրութիւնն է՝ զարգացումն է: Օրաւոր եւ յստակ միտք մը որ եւ իցէ առարկայի կամ որ եւ իցէ աշխատութեան իր տաղանդները կըրնայ դարձընել, եւ լոկ վարժութեամբ մասնաւոր նիւթի մը մէջ կըթուած միտքէ աւելի յաջողութիւն կը գտնէ: Մեր ազգին մէջ ընկերութեան ամեն վեճակները, կառավարութեան բնութիւնը, եւ ժողովուրդին ճաշակը դաստիարակութեան մէջ ընդհանուր սկզբունքներու ծանօթութիւնը կը պահանջէ մանաւանդ, քան թէ մասնաւոր ճիւղի մը մանրամասն տեղեկութիւնները: Իսկ վերջինը պըտուող կամ արգասիքն է որ ան ընդհանուր մշակութեան ցանէն յառաջ պիտի գայ:

Աւտուցանելու կերպին վրայ մեր յաջորդ յօդուածները պիտի խօսին:

ԱՅՈՐԱԳՐՈՒԹԻՒՆ ԶԱՅԱՍՏԱՆԻ

Իսկէ առաջ նկարագրուած վիճափոր սենեակներն ու ելանելիքը քարաբլրոյն հարաւային դին

են. անկէ անդին դէպ ի հարաւ բարձր հնութեան հետք մը բնաւ չերեւիր. բայց ապառաժը բոլորովին սեպ ու անմատոյց է, զոր քանի մը դժուած պատնէշներ ապահովագոյն եւս կ'ընեն: Իսկ հարաւային դին հին ատենները սրածայր ու ապառաժին մնացած մասին վրայ բրգաձեւ կեցած ուրիշ ապառաժի մը վրայ լայն ելանելիք կար, որ քայքայուած ու տեղը փոքրիկ զօրանոց մը բանտի համար շինուած է եւ Օքնոտն գագաթէն կը կոչուի, քանզի կըստի թէ շինուածին հտին դուռ մը եղած ըլլայ նեղ եւ անմատոյց:

Մինչև յիշեալ Օքնոտն գագաթու կոչուած տեղը՝ ապառաժն իր ամենամեծ բարձրութեանը հասած է, եւ քարաբլրոյն ամենէն ամուր մասը կը կարծուի, քանզի իւր գագաթէն կոչուած ներքնաբերդին անոր անմիջապէս ետեւն է: Ինչպէս վերն ըսինք, աղաճայեաց, սեպ ու զառիվայր ապառաժին երեսը, դաշտին մակերեւոյթէն իբր 60 ոտք վեր խիստ գեղեցիկ սեպաձեւ գրերու երեքսիւնեան տախտակ մը կը տեսնուի: Երեքսիւնեան սեպաձեւներն երեքըկուեան են, եւ լեզուներուն մէկը զանգիկ լեզուն է. եւ որովհետեւ հին կամ Համիրամեան սեպաձեւները մինակ հին Ասորեստանայց լեզուովն եղած կրնան ըլլալ, հարկաւ երեքըկուեանները պարզական միտպետութեան ժամանակէն եղած ըլլալու են: Ինչպէս որ Վանայ երեքսիւնեանն ալ նոյն թուականէն է, մանաւանդ որ Հուլց ան տախտակին մէջ 7 տեղ «Բսերը» սեպ որդի «Գարեհի» բառերը կարդաց:

3. Երեքսիւնեաց, Կառնի հրէք:

Ներքնաբերդն երթալու համար շաւիղ մը կայ որ մինչև ցայսօր վարուն է. եւ դէպ արեւմուտք կը տանի: Խորհուրդն իր վիճափոր սենեակներովն ալ կողմը թող տալէ ետքը, Օմանցիներէն թըշնամիներու յարձակման դէմ շինուած երկու կարգ պատերու մէջ տեղէն քիչ մը վեր ելելուդ պէս երկավի բեւեռներով փայտեղէն դուռ մը կը հասնին, որ ներքնաբերդը հանելու դուռն է, եւ առանց մասնաւոր հրամանի չի բացօթի: Իսկ դուռնէն ներս մտնելէ ետքն ալ դարձեալ առջինէն աւելի բարձր ու ամուր շինուած երկու պատերու մէջ տեղէն անցնիլ հարկ կ'ըլլայ. մանաւանդ աշակողմեան պատը խիստ բարձր, հաստ, ամուր եւ ամեն մասամբ աղէկ է: Իսկ մէջ շատ մը արդի ճարտարապետութեան շինուածներ կան, որոնք ժամանակաւ Եփեսոսիներու բնակութիւնն եղած են. նորաշէն Սառօղի միջերանոց մը, քանզի վաղեմի միջերանոցը կրակ առնելով պայթած ու ամրութիւններուն մեծ մասին վնաս բրած էր. տեղ տեղ կը տեսնուին Սառօղիի Սուրաթի եւ Սուլթան Սիւլթանի ատենէն մնացած կոտորած թըշնամիներ, զորոնք յիշեալ Սառօղիներն իրենց Վիւրաբերու դէմ բրած արշաւանաց ատենները մէկտեղ հոն տարած են:

Ներքնաբերդին մէջ քաղքին վրայ նայող

կողման ապառաժին վրայ ճարտարութեամբ փոր-
ուած ընդարձակ միջոց մը կայ, որ մինչեւ ամենէն
բարձր ապառաժին կ'երթայ կը կրթնի: Ապառ-
աժին ուղղահայեաց երեսը կամ պատը որուն ստո-
րան է յիշեալ միջոցը, միջոցին մակերևոյթէն
60 ոտք բարձր է: Պատին գրեթէ ձիշդ մէջտեղը
դուռ մը կայ որ ապառաժին ներսի դին իբր քա-
րանձաւի մը մէջ կը տանի, եւ իբր պատուհան
ներս լոյս տալու համար դրան վրայ ծակ մը կայ:
(Սամանցիները դուռն ու պատուհանը կամաւ աւ-
րած են. նոյնպէս պատին երեսին բոլոր երկայ-
նութեամբը փորուած երկայնաձեւ քառակուսի-
ները դիտմամբ արուած կ'երեւին, ամեն կողմ ա-
ւեր ու ամայութիւն է:

Յիշեալ վիճափոր դռնէն մեծ վիճափոր սենե-
կի կամ սրահի մը մէջ կը մտնուի, որոյ ձեղունը
կամարաձեւ է: Անեակը 45 ոտք լայն, 25 ոտք
երկայն է: Աս վիճափոր սենեկին պատերը խոր-
խորին անձաներուն չափ աղէկ յղկուած, եւ խը-
նամով ու կանոնով բանուած չեն: Աս դիտու-
ղութիւնը բոլոր մնացած վիճափորներուն համար
է: Այն վիճափոր սենեկին կամ սրահին գրեթէ ճա-
կատն ուրիշ 5 ոտք բարձր փոքրիկ դուռ մը 10
ոտք լայն եւ 20 ոտք երկայն փոքր սենեակ մը կը
տանի, որ Աւաթի հոր (նէֆ քուրտուս) կը կոչ-
ուի. քանզի հոս նաւթի սաստիկ եւ գրեթէ ան-
տանելի հոտ կը բուրէ: Անեկին պատերը խիստ
կարծր թրծուն աղւաճ հիւսուած ու կարդ մը շա-
ղախով ծեփուած են: Պատին մէջ ծակ մը կը
տանի խոռոչ մը բոլորովին լի սեւ ու մատղղ
նաւթով որ աղւաններուն պատառուածներէն քամ-
ուելով ան հոտը կը տարածէ: Աս տեղոյն վե-
րին կողման ապառաժին շատ տեղերը կանթեղի
միով սեւցած են: Փաշան որ Հուլը գիւթ
կամ յուսթէ հասկըցող մը կը կարծէր, կը յու-
սար թէ անիկա անշուշտ ան սենեկին մէջ գանձ
պիտի գտնէ: (Սամանցիները, նաեւ փաշան յիշ-
եալ Աւաթի ջըհորը հին գերեզման կարծելով՝
հազիւ անոր մէջ ամբաւ հարստութիւն ամփոփ-
ուած կ'ենթադրէին: Աս յուսով մարդիկը վայ-
րապար երկայն ատեն իրենց գործիքներն ան կար-
ծրը աղւաններուն վրայ կոտորած էին. քանզի ա-
ղւանները շաղախին հետ այնպէս պնդով եփուած
էին որ զանոնք ամբողջ քակել հանել անհնար էր.
վառօք գործածելն ալ օգուտ մ'ըբած չէր

Աւաթի հորին կից՝ ապառաժին վրայ իբր 5
ոտք բարձր եւ նոյնչափ լայն՝ ամկանոն ծակ մը
կայ, որմէ կ'անցուի 5 կտորէ բաղկացած խումբ
մը սենեակներ, որոնք այնպէս փորուած են, որ
ամենէն մեծը՝ 30 ոտք բարձր եւ 20 ոտք լայն՝
առջևեօք է. իսկ երկու փոքրագոյն սենեակներն
առջինին ձախէն ու աջէն են. որոց մէջ երկու
դռներէ կը մտնուի. մնացած երկու սենեակներն
որ նոյն մեծութիւնն ունին, առջի սենեակին եւ
տին կ'իյնան ու մէջէ մէջ դռներով իրարու ետեւ
շինուած են: Բոլոր աս վիճափորներուն մէջ պա-
տէրն առանց զարդարանքի են, հարեւանցի փոր-

ուած, բոլորովին դատարկ: Յիշեալ սենեակնե-
րէն մէկուն մէջ անկիւն մը կայտ մը՝ հող ու մար-
դոց ոսկրներ կան, որոնք նշանաւոր երեւոյթ մը
չունին, եւ թերեւս նախնի Հափրամեան միա-
պետութեան ժամանակին կը վերաբերին: Անբը-
նաբերդին մէջ աս վիճափորներէն դատ ուրիշ ե-
րեւելի յիշատակարան չկայ:

ԼԵԶՈՒ

ԵՒ ԱՌԱՆՁԻՆՆ ՀԱՅԵՐԷՆ ԼԵԶՈՒ

ՏԷ- ԲԷ- 6

Աս նիւթին վրայ գրուած յօդուածներուն սկիզ-
բը, մեր գրագիտութեան համառօտ պատմութիւնն
ըրած ատեննիս բնիք թէ աս դարուս մինչև սիյդըն
իբր յիսուն տարի առաջ մեր դրաւոր լեզուն հին
հայերէնը կամ գրաբարն էր: Ահ՝ Սահակէն ըս-
կեալ մինչև Մխիթարեանց հիմնադիրն և անոր
աշակերտներուն ատենը բաւական ժամանակ, ուս-
մանց գիրքերն անգամ գրաբար լեզուով գրուած
են. աշխարհաբար գրուած գիրքեր յիսուն տա-
րուրէ անդին շատ քիչ կը գտնենք: Բայց Մխի-
թարեանց ձեռքով գրաբարին վերականգնանալովն
աշխարհաբարին քիչ քիչ մաքրուիլն ու զարգանալը,
և ուսումն ու դպրութիւնը ժողովուրդին ամեն մա-
սերուն մէջ տարածելու հարկն այնպէս բրին որ աշ-
խարհաբար մատենագրութիւններն երթալով շատ-
ցան, և մանաւանդ լրագրութիւնն ալ վրայ գալով,
այնպէս եղաւ որ այսօրուան օրս աշխարհաբարն ազգին
գրեթէ ընդհանուր գրաւոր լեզուն եղած է, ու
գրաբարին իսպառ գործածութենէ վերնալը կը
սպառնայ: Ըռաջ գրեթէ առ հասարակ սա խոր-
հուրդը կը տիրէր թէ ուսումն ու կրթութիւնը ժո-
ղովուրդին մէջ յառաջ երթալով, ժողովուրդն ա-
նանկ վիճակի մը կը հասնի, որ գրաբարն ընդհա-
նուր հասկընալու ընդունակ ըլլալով, աշխարհա-
բարին գործածութիւնն ինքնին աւելորդ կ'ըլլայ.
և աս մտքով է թերեւ որ մինչև ցայսօր առհասա-
րակ դպրոցներու մէջ գրաբար լեզուն միայն կ'ա-
ւանդուի, և աշխարհաբարին համար քերականու-
թիւն շինել տակաւին ոչ որ խորհած է, և եթէ
խորհողներ և թերեւ շինողներ եղած են, ընդունե-
լութիւն չգտնելուն երկիւղով, և կամ առաջին օ-
րինակը տուած չըլլալու համար, աշխարհաբար քե-
րականութիւն մը հրատարակելու դեռ մէկը համար-
ձակած չէ:

Մինչև հիմա ազգին տրամադրութիւնն աս էր.
բայց աս վերջին քանի մը տարիներու մէջ աշխար-
հաբար լեզուն ջերմ պաշտպաններ ունեցաւ. նա
մանաւանդ ոմանք Աղղախօսութիւն կոչուած նոր
աշխարհաբար քերականութեամբ, Պօլոյ աշխար-
հաբարին մէջ քանի մը ուղղագրական ու քերա-
կանական նշանաւոր փոփոխութիւններ ընելով, աս

լեզուին հաստատութիւն տալ (Յիսի) ուղեցին. և Սահմանադրութենէն ետքն ազգային դպրոցներուն տրուելու նոր կարգադրութեան ատենն ուսմանց կարգէն դրաբար լեզուին քերականութիւնը բոլորովին վերացուեց ուղղներ եղան. բայց դրաբարն ազգու պաշտպաններ ունենալուն համար, Ուսումնապետական կոմիտէին որոշումն ի նպատակ դրաբարին եղաւ, և դրաբար քերականութիւնն իբր հայերէն լեզուին գլխաւոր ուսումն, ինչպէս որ էր այնպէս, ուսմանց կարգին մէջ մտցաւ: Ըստնք թէպէտ ժամանակակից գէտերէն են, բայց քանի որ խօսքը հայերէն լեզուին վիճակին վրայ է, թող աս գէտ-բերն իբր մեր դարուն հայերէն լեզուին պատմութեանը վերաբերեալ պատմական յիշատակութիւններ ի դիր աւանդուած մնան:

Աս պատմութիւնէն տեսնուեցաւ որ հայերէն լեզուին նկատմամբ մեր ժամանակն երկու գլխաւոր տիրող կարծիք կայ: Մէկը՝ դրաբարը կենդանաւորող կարծիքն էր, որ ազգին լեզուն ան ըլլայ, միւսը՝ ինքն ինքն լեզուն մեռելալ համարելով, աշխարհադրաբարն հաստատութիւն տալով աս վերջինն աղային բարին հաստատութիւն տալով աս վերջինն աղային լեզուն ընել կը փափարքի: Թէ՛ դրաբարը կենդանաւորող ուղղներն ու թէ՛ աշխարհաբարին հաստատութիւն տալ ուղղներն՝ այլեւայլ տեսութեամբ իրաւունք ունին: Բայց կարեւոր տեսութիւն մը կայ որուն աս երկու կարծեաց մէջ ալ ուշադրութիւն եղած է: Արեւիքն ալ կենթադրեն թէ կենդանի, այսինքն ներկային մէջ խօսուած ու գրուած լեզուի մը աս կամ ան ձեն աննելը մարդոց հեղինակութենէն կամ կամքէն կախում ունի. կամ թէ բնորոշ կենթադրեն թէ լեզուներուն ճակատագիրը մարդոց որոշմանը ձեռքին մէջն է, այնպէս որ օրինակի համար մենք, այսօրուան օրս իբր թէ՛ կարող ենք մեր լեզուն մեր ուզած կողմաբարն ձուլել, անիկայ մեր ուզած կերպին դարձնել, եթէ ամենքս մէկէն միտաւորենք: Այն աս նպատակին համար՝ դրաբարը կենդանացնել ուղղներուն իբր հնարաւոր տեսած կերպին մէջ աս ենթադրութիւնը շատ յայտնի չտեսնուիր, Ուղղախօսութեան հեղինակներուն գործնական կերպով յայտնած գաղափարին մէջ ան ենթադրութիւնը բացայայտ կը տեսնուի: Մենք աշխարհաբարին հաստատութիւն տալ ուղղներուն, կամ աշխարհաբարին ազգային գրաւոր լեզու ըլլալուն հակամէտ եղողներուն ոչ գաղաւոր լեզու ըլլալուն հակամէտ եղողներուն ոչ գաղափարը ոչ ալ ջանքերը կը մեղադրենք. միայն ըսել կ'ուզենք թէ սա ենթադրութեան մէջ թէ՛ Մենք լեզու մը մէկէն արհեստական ճամբով, կամ մեր հեղինակութեամբն ու որոշմամբը կրնանք այս ինչ հեղինակութեամբն ու որոշմամբը կրնանք այս ինչ ձեռք բերել, պակաս տեսութիւն մը կը նշմարենք: Աս ենթադրութիւնը կը ցուցնէ թէ լեզուներուն հոգեբանական (փոփոխական) օրինաց ազդեցութեան տակ, կամ մտքին հոգեբանական գործողութեանն ազդեցութեան ըլլալը ճանչցուած է: Արդեւ թէ մենք կրնանք ընել ան բանը զոր միակ բնութիւնն ըսել կարող է, մեր ջանքերն ապարդիւն ընելէ զատ նեղ սխալ ճամբու ալ կ'առաջնորդէ: Մեր ջանքերն մեղ սխալ ճամբու ալ կ'առաջնորդէ: Մեր ջանքերն ապարդիւն ընել ունենար, քանզի մարդկային մտքին

մէկ օրէնքն է՝ որ ներքուստ իրմէ կամ կենսական շարժմամբ յառաջ չեկած, այլ արտաքուստ իր վրայ գրուած բան մը ժամանակին կը հետեւնէ կ'ընկենու: Սխալ ճամբու ալ կ'առաջնորդուինք անոր համար որ մեր ըրածը փորձառութեան հաստատութեան արդարեւ ըլլալու տեղ հեղինակութեան մը բունազգեսեալ օրէնքն եղած ըլլայ, և թե՛ ինչ սա փաստակարութիւնն ալ կ'ունենայ որքանութեան ազատ շարժմանն առջևը խօզ մը կը դնէ, այնպէս որ թե՛ ինչ գաղափարն ալ ըլլան, մինչև որ անխոհեմ նախնիներու կողմէ մէկ հանգոյցը խլուի, և միտքը հեղինակութեան կողմէ արձկուի: Այն կայ բան մը որուն մէջ ի յառաջագունէ կամայական օրէնք մը դնելէ զգոյշ ըլլալու ենք, լեզուն է: Լեզուի աղատութիւնը մտքին աղատութիւնն է. լեզուն որ և ինչ կերպով կ'աղայ միտքը կ'աղայ է: Միտքն ու լեզուն չեն նմանիր անգործարան մարմիններու որոնք արտաքուստ մասնաց յարակցութեամբ կամ կուտակութեամբ կ'աճին, այլ կը նմանին կենսականութիւն ունեցող գործարանաւոր մարմնաց, որոնք իրենց բնութեանը մէջ գրուած սերման զօրութեամբը պիտի բարգաւաճին մանաւանդ քան թէ աճին:

Գրաբարը կենդանացնել ուղղներէն անոնք՝ որ յանկարծ կամ ինչպէս որ է դրաբարն աշխարհաբարին տեղը դնել կը խորհին, թէպէտ լեզուի հեղինակութիւն մը բանեցուցած չեն ըլլար, ըստ որում արդէն հաստատութիւն գտած լեզու մը գործածութեան մէջ դնել կ'ուզեն, բայց և այնպէս միւսնոյն պակաս գաղափարը յայտնած կ'ըլլան, այսինքն՝ լեզուներուն մտքին հոգեբանական օրինաց ազդեցութեանը տակ ըլլալը չճանչնալ մը կը ցուցնեն: Քանզի ասոնք ալ կ'ենթադրեն թէ աշխարհաբար լեզուն գրաբարին մոտցուելէն, կամ ժողովուրդին բերանը հեղհեռեալ տանգարութիւն յառաջ եկած աղաւաղութիւն մըն է: Բայց աշխարհաբարներուն (ոչ միայն մերինն, այլ և բոլոր նոր համայնքն) բնութեան լեզուներուն, ինչպէս են նոր Ռումանական լեզուներն, իտալերէնը, ֆրանսերէնը, Սլոնիներէնը և նոր (Յունարէնը) ծագումը ոչ թէ առանց պատճառի աղաւաղութիւն մըն է, այլ մտքին հոգեբանական գործողութեանը մէկ հետեւութիւնը. ասոր ասանկ ըլլալուն ազդեցոյց՝ դրեմէ ամեն հին կամ մայր լեզուէ աշխարհաբար եղած ըլլան, ու ամեն մէկուն մէջ յատուկ ու միօրինակ սկզբունք կամ ընթացք մը տեսնուի: Ասանկ որ, ինչպէս քիչ մը ետքը պիտի տեսնուի, կրնանք ըսել թէ աշխարհաբարներն յառաջ բերող պատճառը ոչ թէ մայր լեզուներուն կանոնաւորութիւնը, ոգին ու յատկութիւններն աղաւաղող ազդեցութիւնն է, այլ մարդկային մտքին մէկ մղումը որ ամեն տեղ միւսնոյն է և միւսնոյն երեւոյթը յառաջ կը բերէ:

ԽՐԵԱՐԵԱԹԵԱՆ ԵՒ ՅՊԱՐԱՆԻ ՏՆՈՐԵՆ

Ա. ՃԻՎԱՀԻՃԱՆ